

Վրիստոսի խոնարհեցուց, և ալ վերջը անոր խաչին ոտքը ձգեց՝ իբրև թէ երկրնքի դպցրնելով այն թագը՝ զոր արդէն Վրիստոս Մստուած օրհնէր էր Մբգարու գլուխը . — և այս կրկնակի վեմ և սրբազան Մշակունեաց թագին և ցեղին համար էր՝ որ երբ քանի մը մտամուրը իշխանք միաբանած կ'ուզէին Պարսից մասնել, մեծն և սուրբն Խաչակ հայրապետն հայոց և ինքն իսկ պահապանն՝ քահանայապետական գաւազանը Մհարովնէն ալ բարձր վերցրնելով՝ ինքն զինքն իբրև պարիսպ ի մաստուծեան և ազգասիրութեան մէջ ձգեց հաւատարիմ և անհաւատարիմ հպատակաց՝ պաշտպանելով հայաստանի փառացը բայց անոր բազմին վերջին ժամը հնչեր էր վերէն . Մշակունեաց թագաւորական գաւազանը կտորած յերկիր ընկաւ, սուրբն Խաչակ յափշտակեց տարաւ յերկինք :

Տ . Ղ . Մ

ԱՆՆԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Սորոգրոթիւն Սովետական Գաւառացի :

ՎԻՆԱՒՈՐ քաղաք բոլոր երկրին Սմերէթոյ, Վուրիոյ, Մգուելի և Սուանէթի, որպէս յառաջն՝ արքայանիստ տէրութեան Սմերէթոյ էր Վութայիս, նոյնպէս և այժմ իշխանանիստ (գուբեռնիայ) կայսերութեանն Սուսաց : Տեղի քաղաքին յառաջնմէ էր ՚ի վերայ լեռնային մեծի բլրոյ ուր կայր և ամրոց մեծ . իսկ այժմ աւերեալ է այն ամրոց հանդերձ մեծ եկեղեցեանն Սրաց . գոն քանի մի տունք Սրաց և հայոց՝ հանդերձ առաջնորդարանաւն իւրեանց : Բայց այժմ քաղաքն է ՚ի ստորոտ բլրոյն, երկայն և յոյժ կանոնաւոր ձևով, ըստ տարազու Եւրոպայեոյ . և Սիօն գետն կիսակղզի արարեալ զքաղաքն՝ պատելով անցանէ յորդութեամբ ընդ բազում

1 Տես Բազմ. Հտ. Ը. երես 341 :

վտաւանս և ամայ ՚ի ծովն Պոնտոսի :

Սերազնեայք գտանին ՚ի քաղաքի տունք ոչ աւելի քան զվաթսուն, և են նոքա պարապեալք ՚ի տուրևառս վաճառաց և ՚ի ձեռագէտս . արք մարդասերք, և համեստակրօնք . փայլի իմն յերեսս նոցա բնութիւն վաղեմի հայոց . խօսին սոքա ամենեքին ՚ի Սրաց լեզու, և սակաւք են յոյժ յոյժ որք զմերն իմանայցեն . քանզի, ամուչեմ ասել, չգտանին անդէն հինգ անձինք գիտակ լեզուիս հայոց : Ունին երկու փայտակերտ եկեղեցիս յանուն սրբոյ Մստուածածնին, բայց յաւուրս մեր առին հրաման յարքունուստ վասն շինելոյ զնորոգ հոյակապ եկեղեցի, զորոյ զհիմունս են ինքն օրհնեցի յամի 1844, ուր ընթանայ գետն Սիօն յարևելից կուսէ եկեղեցոյն զափամբ քերելով, բայց այն ձեռնարկեալ եկեղեցի դեռ ևս կայ այնպէս, հազիւ հիմնն հաւասարեալ գետնոյն . ունին երկու քահանայս, և չիք աւանձինն դպրոց հայոց, և թէպէտ գոյ արքունի ուսումնարան, բայց ՚ի սաղրելոյ բանասարկու անձանց, վերջացեալ է դասատուութիւն լեզուի հայոց :

Են ՚ի քաղաքիս և երեսուն տունք հռովմէականաց որոց է նորակառոյց եկեղեցի շքեղ և վայելուչ . ունին և զաւանձինն դպրոց . գտանին երկերիւր տունք Սրաց, նոյնչափ ևս և հրէից, որք ունին և զժողովրդանոց կամ զփնակոկայ, են առ հասարակ վաճառականք՝ պարապեալք ՚ի տուրևառութիւն աշխարհին :

Որպէս երկիրն նմանապէս և քաղաքն է այգեւէտ, այգիք տեղւոյն են անուող ՚ի մարդկանէ, միայն հանապազօրեայ անձրևով բաւականանան : Տունք և կրպակք առհասարակ փայտակերտք են : Մք և կանայք մերձակայ գիւղերից յամենայն աւուրս երկուշաբաթի և ուրբաթու խուռն դիմեն ՚ի տօնավաճառն, որ լինի ՚ի քաղաքն . վասն որոյ յայն երկուս աւուրսն լինին անդէն մեծ բազմութիւն և վաճառք դիւրապին իրաց :

Չիտար է գիւղաքաղաք առ ստոր

տով մեծի լերին միոյ՝ հեռի 'ի Վու-
 թայիսայ երեք ժամու և 'ի լեռնէն
 բղխէ յորդառատ և անուշահամ գետ .
 տունք հայոց են քսան և ութ , Սրաց
 իբր հարիւր և ութսուն . առհասարակ
 հայք և Սրաց են ստրուկք եկեղեցւոյն
 Սրաց գեղջն որ յանուն սրբոյն Վեոր-
 գայ , ուր գոյ և երևելի հոյակապ եկե-
 ղեցի յանուն զօրավարին , յոր դիմեն
 մեծ բազմութիւնք ուխտաւորաց 'ի
 հայոց և 'ի Սրաց յայլ և յայլ տեղեաց .
 թէպէտ այժմ եկեղեցիս փակեալ կայ
 'ի կասկածանաց վասն պատառուածին
 որ 'ի վերուստ 'ի վայր : Այլ և հայոց
 առանձինն փոքրիկ եկեղեցի , բայց հին
 կրապատ և անհետեթ դրիւք : հայք
 պարապին 'ի վաճառականութիւնս և
 յարհեստս . չիք որ 'ի նոցանէ գիտակ
 լեզուիս հայոց , այլ ամենեքին խօսին
 'ի լեզու Սրաց . 'ի տեսանելն զվարդա-
 պետ կամ զքահանայ հայոց (որպէս
 հայք աւանին նմանապէս և բոլոր հայք
 իմէրէթոյ) բանան զգլուխս և խոնար-
 հութեամբ զօրհնութիւն հայցեն 'ի
 Սրաց բարբառ ասելով Գագուրիէ Ժամ
 այն է օրհնեալ հայր . եկեղեցասէրք են
 և հլու հօգեւորականաց . նոյնպէս և ա-
 մենայն հայազգիք իմէրէթոյ երկիւ-
 ղածք են և սրատկառութեամբ յոյժ , մինչև
 գիտնականք բնութեանց ազգիս օտար-
 ազգիք 'ի տեսանելն զնոսա իսկոյն մար-
 թին իմանալ թէ հայք են սոքա , և որ
 առաւել զարմանալին է 'ի սկզբանէ և
 այսր բնակութեան մերազանց յաշխար-
 հիս այսմիկ չիք լուեալ թէ 'ի մերոցն
 որ դարձաւ 'ի յունագաւանութիւն և
 կամ 'ի դատերաց իւրեանց կանայս ե-
 տուն նոցա , ուր յայլ գաւառս Սրաց
 ոչ նոր ինչ է այս :

Այլ իմէրէթ է գիւղաքաղաք հեռի 'ի
 Վութայիսայ երկու աւուրքք , և է
 լեռնային և արգաւանդահող և բերրի ,
 տեղի տոհմի իշխանաց Ներէթէլեանց
 որք համբաւաւորքն են յերկրին իմէրէ-
 թոյ : Տունք հայոց են երեսուն թուով ,
 և ունին զմի փայտեայ անշուք եկեղե-
 ցի , ամենեքին են վաճառականք և ար-
 հեստաւորք , ունին և ճոխութիւն բա-

զում . և աստ դարձեալ չիք որ գիտակ
 լեզուիս մերոյ : Տունք հրեից ժամանեն
 ցհարիւր . իսկ Սրացն բազումք են , և
 ունին երիս փայտեայ բայց չբնաղակերտ
 եկեղեցիս : Ամենայն բնակիչք աւանին
 առ հասարակ են ստրուկք իշխանաց
 Ներէթէլեանց , բայց են յապահօվի ,
 զի սահմանեալ է գլխահարկ նոցա՝ և
 յիւրաքանչիւր ամի վաճարեալ մնան ա-
 զատ , սակայն իշխանք նոցա գոլով աղ-
 քատք և դատարկասունք պէսպէս հը-
 նարիւք կորզեն 'ի ստրկաց զորամս :
 Վերոյ քան զգիւղս՝ է բարձր և անմատ-
 չելի ամրոց՝ զոր գիտողք 'ի գեղջէն՝
 համարին տեսանել զայն ընդ օդս կա-
 խեալ . և յիրաւի անառիկ է 'ի պատե-
 ռազմողաց եթէ ունիցին ինքեանց զպա-
 շար , որպէս և բազում նեղութիւնս
 կրեաց իշխանութիւն Սրացոց 'ի պաշա-
 րելն զայն , և 'ի չկարելն մարտիւ գրա-
 լել , խաղաղութեամբ էսու և մասամբ
 իւրք քակեաց զորմունս նորա : ()
 գեղջն կամ աւանիս չէ գոլելի , որպէս
 և ջուրն չէ առողջարար . ուստի և յա-
 մարան կրեն բնակիչք նեղութիւն մեծ
 յօգոյ և 'ի ջրոյ , վասն որոյ և բազումք
 տենդիւ ախտանան զամառն ողջոյն :

Այլ իմէրէթ կամ ըստ բարբառոյ ռամկաց՝
 () ի Կալաթի , է գիւղաքաղաք ինչ 'ի
 լայնատարած դաշտի՝ ուր յաւաջոյ քա-
 ղաքին՝ յարեմտից յարեմուտս կարկա-
 ջասահ սաստիկ յորդութեամբ ընթա-
 նայ գետն Սրաց : Վաղաքն է գեղեց-
 կազիր և յարմարաւոր քան զմիւս ա-
 ւանս իմէրէթոյ . նմանապէս և օդն
 է առողջարար , ուստի և բազմաբնակ :
 Աստի մանակից է մեծի լերին արգիւն
 Սրացի , որք են արք գեղեցկազգէք
 և քաջակորովք և միշտ 'ի մարտս պա-
 տերազմաց պարապեալք ընդ լեռնա-
 բնակ դրացիս իւրեանց . չունին յին-
 քեանս ոչ արհեստաւոր և ոչ վաճառա-
 կանս՝ և պարապին 'ի իսաղնարածու-
 թիւն և 'ի տուարածութիւն . քաղա-
 քավարք են և ոչ ըստ այլոց լեռնակա-
 նաց վայրենիք . սիրողք վայելուչ հան-
 դերձից ըստ արգիւն արգիւնականաց ի-
 մէրէթոյ . ուստի և զէնք նոցա արծա-

Թապառք են և ինքեանք մաքուրք և բարեձևք . կրօնիւ են կուսպաշտք , բայց չունին ամենեւին զմեհեանս կամ զկուռս ինչ . այլ միայն ճանաչեն զմի Մտուած ըստ աշխարհային խօսակցութեանցն և երդմանցն զոր խօսին . լեզու նոցա է մի և նոյն լեզու Սրաց , Թէպէտ և զայլ խեցբեկ լեզուս ևս խօսին զոր ինքեանք միայն իմանան : Մ. յԺԺ՝ ի սերութենէ Սուտաց կարգեալ կան անդ քահանայք Սրաց ՚ի քարոզել և ՚ի մկրտել զնոսս , տալով իւրաքանչիւր մկրտելոց մի մի մանէթ արծաթ , և մի Բօֆ կտաւ (10 գաղ) . գտանին ՚ի նոսս և այնպիսի խաբէբայ անձինք , որք վասն դրամոց և կտաւոցն տասնիցս և առաւել ևս մկրտին ՚ի զանազան քահանայից յայլ և յայլ տեղիս : Բայց արդ դարձցուք ՚ի կարգ բանիս : Բնակիչք Սաւաւի են Հայք , Սիւրք և Հրէայք . ամենեքեան են ստրուկք իշխանաց սոհմին Վաղիանայ և Շէրէթէլայ . իսկ տունք Հայոց են Հինդ , որք սարապին ՚ի վաճառաշահութիւնս , նմանապէս և Հրէայք են վաճառականք . սոքա բազումք են յոյժ Թուով քան զայլ Հրէայս աւանաց և զիւղորեից երկրին Սմէրէթոյ : Սրացիք ևս բազմաթիւ են և առ հասարակ հողագործք և այգեպանք : Ի Հայոց փայտակերտ եկեղեցի յանուն Մտուածածնի , և չիք աստ առանձին քահանայ վասն Հայոց՝ զի քահանայն Էջիսումայ հովուէ զնոսս :

Էջիսում է գիւղաքաղաք , հեռի ՚ի Սաչխէրէթայ երկաւոր ճանապարհաւ . լեռնային է և ապառաժուտ , զբժուարակոխ են ճանապարհք և յոյժ վտանգաւորք , ուստի և երանելի իսկ է ճանապարհորդ եթէ կարասցէ երիւրաւ անվտանգ անցանել ընդ գիւղային ճանապարհս : Մողջարար է յոյժ օդ տեղւոյս , և ջուրն է ահանակիտ . իսկ տեղի բնակութեան բնակչաց է առ ստորոտով մեծի բարձրագաղաթ լերին : Վեղեցիկութիւն բնակչաց քաղաքիս յոյժ զհամբաւի հարեալ է ՚ի կողմանսն յայնոսիկ : Երկուրորք տեղւոյս

քաղաքաւարք են և ընդէլք բնութեամբ քան զայլոց քաղաքաց : Տունք Հայոց են վեշտասան և ամենեքին են վաճառականք , ունին զմի փայտաշէն եկեղեցի և զմի քահանայ , որ հովուէ և զժողովուրդ Սաւաւի ընդ այնքան վտանգաւոր ճանապարհս գնալով մինչև յեն . Թացս երկուց աւուրց : Տունք Սրաց և Հրէից բազումք են , և ամենեքին են ստրուկք իշխանին Վաղիանայ : Բնահասարակ ՚ի Չիտար , ՚ի Սաչխէրէթ , ՚ի Սաւայ և ՚ի Էջիսում չիք որ և ոչ մի ՚ի մերոց ժողովրդականաց գիտակ լեզուիս Հայոց , այլ առ հասարակ վարին Սրաց բարբառով :

Մ. յքրան ասել շատ լիցի յաղագս վիճակին Սմէրէթոյ . սկսցուք այժմ զվիճակէն . Բարթլայ՝ նախ ՚ի Վառայ կամ ՚ի Վարոյ քաղաքէ ճառելով զպատմութիւնս :

Վառայ կամ ըստ այժմեան գործածութեան Վարի է քաղաք շինեալ վասն Հայոց յաշխարհին Սրաց , յարեմտեան կողմն Տփսիսայ՝ երկաւորք հեռի ՚ի նմանէ , շինեալ ՚ի Վաւթէ արքայէ Սրաց յամի Թուականութեան Հայոց Շ. Յ. Բ. , առ ստորոտով բլրակին՝ ուր կայ ամրոց նորին :

Տարածութիւն քաղաքիս լայնարձակ և ընդերկար է յոյժ , զի եթէ տասնիցս առաւելուին Թուով բնակիչք քաղաքիս , ոչ անձուկ ինչ լինէր նոցս տեղին : Յարեմտեան կողմանէ քաղաքին իջանէ մեծ գետն Վուր՝ ընդ հարաւ քաղաքին անցանելով դէպ յարեւել ոչինչ հեռի ՚ի քաղաքէն . նմանապէս ՚ի լերանց մեծին Վովկասու՝ ելանէ գետն Էտախու , և ՚ի հիւսիսոյ արեւմտից դէպ ՚ի հարաւ իջանելով խառնի ՚ի Վուր գետ , յորդառատ և սրբնթաց յոյժ , և քաղցրահամ է ջուրս քան զՎուր գետոյն , Թէպէտ և քաղցրութիւն ջրոյ սորա ոչ ինչ ընդհատ գովի ՚ի տեսողաց . սմին նման իջանէ ՚ի մերձակայ լերանց և գետն Փշան ՚ի հիւսիսոյ արեւմտից նորա ՚ի հարաւ կոյս և խառնի ՚ի գետն Էտախու , բայց սղտոր է ջուրն և դառնահամ :

()դ քաղաքին է առողջարար և զովարար յոյժ , զի յրնթացս այնքան ամաց պաշտօնատարութեան իմոյ ոչ ցաւեցաւ և ոչ զլուինն իմ , և ոչ տեսի անդ զտկարութիւն և զայլ վտանգաւոր հիւանդութիւնս , և ոչ զցաւ ջերման կամ տենդի : Ամրոց քաղաքին՝ շինեալ է որպէս ասացաւ ՚ի գաղաթ բլրոյն՝ երկարած և յարեւելից յարեւմուտս , և մարթի կոչել զայն անառիկ՝ եթէ գտանիցին յամրոցին զօրք պատերազմականք հանդերձ պաշարօք : Յարեւմտեան կողմանէ՝ ամրոցն ՚ի վերուստ ՚ի վայր ելելէ ջութեամբ բրգայն իջեալ է ցյատակ գետնոյն վասն պահպանութեան ջրոյն ՚ի հարկաւոր ժամանակի : Այժմ յամրոցին չիք ոչ տուն , ոչ սենեակ և ոչ ինչ , միայն խորափոր այր ինչ կրասրտ բարձրացուցեալ մինչև ցեղերանն՝ որ է հասարակ յատակ բլրոյն : Կան անդ երեք թնդանսթք յարքայէն հերակլեայ՝ և ՚ի վերայ նոցա գրեալ զաղերս առ Մատուած , որոյ սկիզբն այսպէս սկսանի .

Տուր զօրութիւն ծառայի քո , և այն : Բնակիչք քաղաքիս առ հասարակ են հայք , Աիլք և կաթողիկք և ամուսնացեալ աստիճանաւորք Սուսաց : Տունք հայոց են չորս հարիւր , և ունին զերիս փառաւոր ծիսական եկեղեցիս , և զմի ուխտատեղի : Բնուանք եկեղեցեաց են Վարաշէն սուրբ Ստեփանոս շինեալ ՚ի թուին ԹՃԼԳ յորձատաշ կարմրագոյն քարանց . միւսն Ստեփանոս՝ նորաշէն եկեղեցի կամ տէր Սովսէսի եկեղեցի աղիւսակերտ և վերամբարձ . ՚ի ներքոյ բեմին գտաւ այր մի գեանափոր , և ՚ի նմա մարմինք երեք , որոց միոյ գլուխ չգոյր ամենևին , միոյ գլուինն հատեալ և առ կշտոջն եղեալ , իսկ միւսոյն ամբողջ , եղեալ զերեսին ՚ի վերայ փսիաթի . տեսեալ զայն տասեցին զայրն և ամփոփեալ զնրջխարան յարկեղ ամբափակեցին զչրջապատն , շինեցին ՚ի վերայ նոցա փոքրիկ սեղան պատարագի , ուր երբեմն երբեմն մատուցանեն զհաշտարարն պատարագ ըստ խնդրոյ բարեպաշտօն ժողովրդոց . իսկ միւսն որ քան զերկուսն

է հրաշափառագոյն՝ է յանուն Բստուածամօրն շինեալ ՚ի ժամանակս վերջնոյն հերակլի արքայի Արաց , անձնանուէր աշխատութեամբ՝ հանգուցեալ աւագ քահանային և գործակալին հայոց Աբրաստանի տեառն Սահակայ՝ որ արգարև հիացուցանէ զտեսողն . այն գործարժանաւոր հոյակապ և մեծագործ անձին , և զանուն բարեացարարտ քահանային մեծաձայն հռչակեն ժողովուրդք երկրին : Կտանին այժմ թուունք քահանայիս և անուանին յանուն նորին :

Վանի մի քայլ հեռաւորութեամբ յեկեղեցոյն դէպ յարեւմուտս , է փոքրիկ մատուռն յանուն Բստուածածնի՝ և ՚ի վերայ նորա զանգակատուն հնաշէն . բնակիչք աւանդութեամբ այնպէս ասեն՝ թէ առաջին նախամայր եկեղեցի քաղաքիս սա է . բայց չիք ինչ արձանագրութիւն և թուական : Բաց յերկեկեղեցեաց և ՚ի միոյ մատրանէ հայոց գտելոց ՚ի քաղաքին , գտանին ՚ի գերեզմանատունս երեք փոքրիկ մատրունք . միայն ցաւելին այս է զի յայնքան գերեզմանս հայոց չիք ինչ տապանագիր ՚ի լեզու հայոց , և յայնքան ժողովուրդս՝ բաց ՚ի քահանայից հայոց չգրտանին ՚ի քաղաքին վեց կամ եօթն անձինք գիտակ լեզուիս հայոց , և նոքա են արք վաճառականք . նմանապէս և յամենայն գիւղորայս վիճակի սարին , բաց ՚ի քանի մի գիւղօրէից՝ զորս ըստ տեղեաց տեղեաց թուեցից :

Հայք առ հասարակ են վաճառականք և արհեստաւորք՝ ճարտարք և անխորք յայլոց ՚ի վաճառաշահութիւն , ոգի տուրեւաութեան չաստուծոյն ՚ի սոսա փողփողէ . քաղաքավարք են և մարդասէրք՝ բայց և կռուասէրք , ՚ի վիճաբանութիւնս փոյթք՝ ՚ի յիրաւարանս դատից զիւրամուտք և սրտոտ , հազիւ պատահի սոցա ընկձիլ յաստիւայ ՚ի գատարանս :

Քաղաքին գտանին քանի մի տունք հայոց իշխանաց , այսինքն (Թուամանեանք (այն ինքն է Սամիկոնեանք) և Բեկթարեկեանք , որք ՚ի դիւանատունս և ՚ի զինուորական ծառայութիւն

կայսերութեան Ռուսաց պատուեալք են իշխանական անուամբ . նմանապէս գտանին քանի մի տունք ազնուականաց Հայոց : Տունք Ս րաց համեմատին ըստ չափոյ տանց Հայոց . և ունին զերկու ծխական եկեղեցիս և զմի զօրաց եկեղեցի . իսկ տունք կաթողիկաց են մինչև ցքսան և հինգ կամ առ առաւելն երեսուն , և ունին զմի պատուական եկեղեցի , և կառավարէին հոգևորական կառավարութեամբ երկուց պատրոց . բայց յամի 1844 ըստ կայսերական հրամանի ամենայն պատրիք եկեալք 'ի Ռուսաստան՝ մերժեցան 'ի տէրութենէ Ռուսաց , և պատրիք Վարդայ հանգոյն այլոց արտաքսեցան 'ի սահմանէն Ռուսաց :

Ի Վարդի գոն երկու երևելի ուսում նարանք , մի արքունական՝ 'ի պէտս որդւոց առ հասարակ ամենայն բնակչաց , իսկ միւսն վասն հոգևորականաց Ս րաց՝ շինեալ ծախուք հոգևոր իշխանութեան նոցա , և թէպէտ Հայք ևս սկսան շինել բարի նախանձու՝ և մերովս հոգողութեամբ աւարտեցաւ բաւական ծախուք ազգայնոց , բայց փակեցաւ այն աստուածահաճոյ շինուած յամի 1847 'ի ցաւ և 'ի հեծութիւն ազգասիրաց :

(ՅՒՅՐՏՆ ՅԵՌՅԷԻԿՅՍ)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Բ .

Հարստութեանց՝ վրայ :

ՔԱՂԱՔԱԿԱՆ տնտեսութիւն վախճանը որչափ կարելի է ժողովրդեան վիճակը լաւցընել՝ ու մարդկային ընկերութիւնը երջանկացընել ըլլալով , հարկաւ ան բաներուն վրայ կը խօսի՝ որոնք իրաւցընէ բարեկեցիկ կ'ընեն զմարդիկ . և որովհետեւ աս բաներուն հիմը , կամ թէ՛ ըսենք աղբիւրը , հարստութիւն

1 Գ. Գ. Les richesses.

ներն են , նախ պէտք է որ մենք ալ անոնց վրայ խօսինք :

Հարստութիւնը մարդկային բարեկեցութեան պատճառ սեպեխուսութիւն ևս շատ մարդիկ զարմանան , բայց շուտով ըսածներնուս կը համոզուին՝ երբ որ իմանան թէ հարստութիւն ըսելով քաղաքական տնտեսութեան մէջ՝ միայն ոսկի , արծաթ , գոհար , մարգրիտ , և ասոնց նման ուրիշ ծանրագին բաներ չենք հասկընար , հապա՛ն և իցէ բան որ մէկ կերպով մը մարդուս պիտոյքը կը լեցընեն :

Քաղաքականօրէն աւելի հարուստ կը սեպուի ան երկիրը՝ որ թէպէտ և ոսկի արծաթ քիչ ունի , բայց ապրուստի բաները հոն աւելի առատ ու աժան են , քան թէ ան երկիրը՝ ուր որ թէպէտ և միլիոնաւոր ոսկի ու արծաթ դահեկան ունեցող առանձնական մարդիկ կան , բայց հասարակ ժողովրդեան ապրուստին վերաբերեալ հարկաւոր բաները ամենաքիչ և սուղ են : Ինչպէս ըսինք երկրի մը համար , նոյնպէս իմանալու է մեծամեծ տէրութեանց համար ալ . տնտեսական մը չի կրնար ամէն պարագայի մէջ Ռուսաստանէն աւելի հարուստ սեպել զ՝ Ինգղիան՝ մետաղական գրամին շատութեանը համար . ինչու որ՝ եթէ սովու կամ պատերազմի ժամանակ Ինգղիոյ տէրութիւնը չի կարենայ ժողովրդեան ապրուստին հարկաւոր բաները ձարել օտար աշխարհներէ , ժողովուրդը անօթութենէ կը ջարդուի . վասն զի իր երկիրը բաւական եղածին չափ բերք չի բերեր , մանաւանդ թէ որ երկրագործութեան բանը քիչ մը ձախորդ երթայ : Ուրեմն ինչ բանի կու գայ այսպիսի պարագայի մէջ իրեն միլիոնաւոր ոսկին ու արծաթը : Ինչ որ 1848ին Վաղղիոյ և Ինգղիոյ մէջ եղած ցորենի նեղութիւնը իրեք չորս տարի ալ վրայէ վրայ քշեր , ու () սմանեան տէրութեան ընդարձակ գաւառները կարենային միակերպ պէտք եղած արմտիքը հասցընել , ինչպէս որ նոյն տարին հասցուցին , տես թէ ինչ հարուստ կը սեպուէր Տաճկի տէրութիւն